

«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հաստատում եմ»

ռեկտոր \_\_\_\_\_ Խաչատրյան Գ.Կ.

« 11 » \_\_ 07 \_\_ 2013թ.

Կանոնակարգ

« Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ»  
պետական ոչ առևտրային կազմակերպության «Բազում» մարզաառողջարանային  
հանգրվանի

Հաստատված է

ՎՊՄԻ գիտխորհրդի կողմից

(արձանագրություն թիվ 4 “\_29\_” \_\_ 04 \_\_ 2011թ.)

Փոփոխված է՝ (արձանագրություն թիվ 5 \_\_25\_ \_\_ 05 \_\_ 2012 թ.)

Փոփոխված է՝ (արձանագրություն թիվ 6 \_\_11\_ \_\_ 07 \_\_ 2013 թ.)

«Վանաձորի Հովի. Թունանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ «Կազմակերպություն») «Բազուն» մարզաառողջարանային հանգրվանը (այսուհետ «Հանգրվան»), կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է կազմակերպության կանոնադրության, ներքին կարգապահական կանոնակարգի և սույն կարգի հիման վրա:

### **1. Հանգրվանի գործառույթները.**

Հանգրվանի գործունեությունը նպատակաուղղված է նպաստելու՝

ա/ կազմակերպությունում կազմակերպվող տարատեսակ միջոցառումների, հանդիպումների, բանավեճերի, գիտաժողովների, կոնֆերանսների անցկացմանը, բ/ ուսումնական պրակտիկա, պլեներներ և այլ գործընթացներ կազմակերպելուն և անցկացմանը,

գ/ տարատեսակ մշակութային, մարզառազմական միջոցառումներ կազմակերպելուն և անցկացմանը,

դ/ այլ բուհերի ուսանողների հետ համատեղ ուսումնագիտական, կրթական և այլ ծրագրեր կազմակերպելուն և անցկացմանը,

ե/ կազմակերպության աշխատակիցների, ուսանողների և հյուրերի հանգիստը կազմակերպելուն և անցկացմանը,

զ/ կազմակերպության աշխատակիցների 5-12 տարեկան երեխաների և թոռների հանգիստը կազմակերպելուն և անցկացմանը:

Հանգրվանն ունի վարիչ և սպասարկող անձնակազմ,

### **2. Հանգրվանից օգտվելու կարգը.**

2.1. Հանգրվանից կարող են օգտվել՝

ա/ կազմակերպության աշխատակիցները,

բ/ ուսանողները,

գ/ այլ անձինք:

2.2. Հանգրվանից օգտվելու համար առնվազն մեկ շաբաթ առաջ համապատասխան ստորաբաժանման ղեկավարը ներկայացնում է զեկուցագիր կազմակերպության ռեկտորի անունով:

2.3. Կազմակերպության աշխատակիցները հանգրվանից օգտվում են հետևյալ հիմունքներով՝

ա/ առանց գիշերելու՝ անվճար

բ/ գիշերելու դեպքում ըստ սահմանված գնացուցակի /Հավելված 3/:

2.4. Ինստիտուտի ուսանողների, աշխատակիցների երեխաների և թոռնիկների ամառային հանգստի կազմակերպման համար վարձավճարների չափերը սահմանվում են ռեկտորատի որոշումով:

2.5. Այլ անձինք հանգրվանից կարող են օգտվել հետևյալ հիմունքներով՝  
 ա/ աշխատանքային գործառույթների շրջանակներում կազմակերպությամբ կողմից հրավիրված անձինք՝ անվճար,  
 բ/ այլ կազմակերպությունների կողմից կազմակերպություն գործուղված անձինք՝ ըստ գործող գնացուցակի /Յավելված 1/

2.6. Հանգրվանից օգտվելու գնացուցակը կազմվում է՝ ելնելով տվյալ պահին գործող շուկայական գներից:

2.7. Գնացուցակի մասին առաջարկություններ ներկայացնում է տնտեսական մասը:

2.8. Հանգրվանից օգտվելու զեղչեր կարող են կատարվել ռեկտորատի որոշումով:

2.9. Անհրաժեշտ սննդամթերքների գնումները կատարում է կազմակերպության մատակարարը՝ ըստ նախնական կազմված ճաշացանկի:

2.10. Վնասված, կտրված գույքի համար կատարվում է փոխհատուցում մեղավոր անձի կողմից՝ պատճառված վնասի սահմաններում:

2.11. Սույն կարգը կարող է լրացվել կամ փոփոխվել կազմակերպության գիտական խորհրդի որոշմամբ:

2.12. Կազմակերպության աշխատակիցները ընտանիքների անդամների կամ այլ անձանց հետ հանգրվանից օգտվում են սահմանված գնացուցակով /Յավելված 2/:

**ԳՆԱՑՈՒՑԱԿ**

«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ»  
 պետական ոչ առևտրային կազմակերպության «Բազում» մարզաառողջարանային  
 հանգրվանից օգտվելու  
 (մեկ անձի համար)

**Հավելված 1**

N	Ժամանակահատվածը	ամառային	ձմեռային
1	Ցերեկ /սպասարկման վճար/	1500դր.	2000 դր.
2	Գիշեր /սպասարկման վճար/	2500դր.	4000 դր.
<b>N</b>	<b>Սննդի գումար</b>		
1	Նախաճաշ		1000 դր.
2	ճաշ		2000 դր.
3	ընթրիք		1000 դր.

## Հավելված 2

N	Ժամանակահատվածը	ամառային	ձմեռային
1	Ցերեկ /սպասարկման վճար/	500դր.	1000դր.
2	Գիշեր /սպասարկման վճար/	1500դր.	2500 դր.
N	Սննդի գումար		
1	նախաճաշ		1000 դր.
2	ճաշ		2000 դր.
3	ընթրիք		1000 դր.

## Հավելված 3

N	Ժամանակահատվածը	ամառային	ձմեռային
1	Ցերեկ /սպասարկման վճար/	անվճար	1000 դր.
2	Գիշեր /սպասարկման վճար/	1500դր.	2500 դր.
N	Սննդի գումար		
1	նախաճաշ		1000 դր.
2	ճաշ		2000 դր.
3	ընթրիք		1000 դր.

## Հավելված 4

### Գնացուցակ

*«Վանաձորի Չոլի. Թունանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ»*

*պետական ոչ առևտրային կազմակերպության*

*«Բազում» մարզաառողջարանային հանգրվանում գործող*

*2013թ. ամառային ճամբարի*

2013թ «Բազում» մարզաառողջարանային հանգրվանում. գործող 15 օր տևողությամբ ցերեկային ճամբարի (առանց գիշերելու) համար սահմանել հետևյալ վարձավճարները.

- ✓ կազմակերպության աշխատակցի մեկ երեխայի համար` օրական - 1000 դրամ,
- ✓ կազմակերպության աշխատակցի մեկ թոռնիկի և /կամ / բարեկամի երեխայի համար – 1500 դրամ: